

ԱՆԳՂԻՆ

Աստուծոյ հրեհն մը պատահելով ի վերջոյն քաղաքը անցած ամսու 1 ին, ընդարձակ համբարանոցի մը մէջ՝ որ լեցուն էր պէսպէս ասորականներով, (բանակով, բրինձ, խահով) ու տակը եղած նկուղաներուն (մահազէն) մէջն ալ զիւրավառ նիւթերով, ըստ ոմանց 50 հազար, ըստ այլոց 100 հազար լերէ սթէնիւնի վնաս տրվաւ. հազիւ թէ կրցան շէնքին մէկ մասը ազատելու: Կրակը իրիկան գէմ սկսաւ ու ինչնան կէս գիշեր քըշեց:

Յիշատէրէք արշնդութիւն Մարտիկայի Միգրիտէ հիմակ. ուր տեղ իր բարձր աստիճանին արժանաւոր եղած պատիւներովը ընդունեցին զինքը:

ԶՍԻՒՌԵԼԻ

2 Հոկտեմբեր:

Մնացած Զորքը շարժի իրիկուն՝ սեպտեմբերի 23, քաղաքիս թնդանութիւնը իմացուցին օսմանեանց՝ որ հետեւեալ օրը պիտի սկսի Ռամադան ամիսը:

Մնացածները մէկ մանիօդ յոյս մը բռնել տրւեցին եր տեղոյս հիւնեացոց հիւպատոսը ու հունաստան պիտի խրկէր որ իր անդամութեանը արժանաւոր պատիժը ընդունի: Բայց երբոր հիւնեական հիւպատոսարանին խափառները կրտսեղին որ նաւը դընեն, շատ գէմ կեցաւ անոնց, և ուղեց որ փախէ: Վերջապէս տեսնալով որ անհնար է ազատիլ, յանկարծ խափառներէն մէկուն ատրճանակը յափշտակեց մէջքէն. խափառը տեսնալով որ պիտի զարնւրի, շուտ մը քաշեց միւս ատրճանակը ու կրակ ընելով անոր վրայ, զարկաւ վերաւորեց աս չարագործ մարդուն ոտքը: Աստի յունաց հիւանդանոցը տարին զանի որ երբ աւողջանալու ըլլայ նէ խելոյն հունաստան պիտի խրկուի:

Թիֆլիզէն կըգրեն, թէ նոյն քաղաքի հայոց ուսումնարանը շատ բարեկարգութիւններով օր ըստ

օրէ տաւ իր թաւով վրայ է, սրբազան Կարապետ վիճակաւոր Լըք Լապիկոպոսին հայրական խնամքովը: Աս ուսումնարանը եօթը ուսուցիչունի, մէկ վերապետ ու երկու հարուրի չափ աշակերտ: Գասառուութիւնը իրեք կարգի բաժնուած է: Առաջին կամ բարձրագոյն կարգի աշակերտները կը սորվին հայերէն աստուածաբանութիւն, տրամաբանութիւն, ճարտասանութիւն և հայկաբանութիւն. որոնց վարձապետը արժանապատիւ Կարինեան գիտնական պարոն Տակոյն է. իսկ ուսուցիչն լեւուր կըսորվին ընդհանուր պատմութիւն, աշխարհագրութիւն, այժէպար և Ռուսաց գրականութիւնը. նաև թարգմանութիւն կընեն ռուսերէնէն ի հայ և հայերէնէն ի Ռուսաց լեզու: Երկրորդ կամ միջին կարգի աշակերտները կըսանին հայերէն և ռուսերէն քերականութիւն, թուաբանութեան և աշխարհագրութեան սկզբունքները, նաև հայերէն քրիստոնէական վարդապետութիւն, ու եկեղեցական երգեր: Իսկ երրորդ կամ ստորին կարգին մէջ եղողները կըսորվին հասարակ ընթերցմունք Հայոց և Ռուսաց լեզուու: Վայելագորութիւն և մանաւոր թուաբանական ծանօթութիւններ: Կըյոսանք որ օրէ օր ալ աւելի բարեկարգութիւններով պիտի առաջ ելլայ աս ուսումնարանը յիշեալ սրբազան Լաւրիկոպոսին ուսումնասիրական գովելի ջանքովը: Աւրախ սիրտով կըլսենք նաև թէ Թիֆլիզը Հայոց տալաքարտունը յառաջագոյն կըծաղկի ազգասէր պաշտպանութեամբ ու խնամքով հայազգի մեծապատիւ իշխանին Բայ Լաւրիկոպոսին օրուն բարեյիշատակ հայրը նուիրած է աս տալաքանք՝ յիշեալ ուսումնարանին. ուստի հիմայ անոր հայրենասէր որդին՝ իր ազգին լուսաւորութեանը և ուսումնական յառաջագիտութեանը նպաստամտոյց ըլլալ ցանկալով, առատաձեռն տուրքով միշտ խնամք կըտանի նոյն տալաքանին բարեկարգութեանը ըստ ամենայն մասին. վասն որոյ կըպարտաւորինք մեր երախտագէտ շնորհակալութիւնը հրապարակաւ մատուցանել յիշեալ ազգասէր մեծապատիւ իշխանին:

Վերջիշեալ տարագրատանը մէջ արդէն վեց տեսակ հայերէն աղւոր գիրեր կան, ուր տեղ մաս

նաւոր բանի մը գրքեր տպւելէն ի զատ, հիմակ կըտրուի ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան անունով գիրք մը. որնոր ջալալեան շնորհազարդ պիտեական Սարգիս Սարգսպետին աշխատասիրութիւնն է:

Եւաշէն (Սօլտովա) մօտեւր ընդունած գիրքը նէս կիմանանք, որ այն քաղաքի Հայոց դպրատունը օրէ օր կըծաղկի՝ Սօլտովայի քաղցր կաւաւարութեան բարեխնամ պաշտպանութեամբը:

Մնացած ամսու 16 ին ընդհանուր քննութիւն եղեր է յիշեալ դպրատան հոգաբարձու յարգամեծար Վիսիմեան աղայ Գրիգորին տունը, ի ներկայութեան կաւաւարութեան գլխաւոր գործակալներուն, ու Հայոց հասարակութեան հոգաբարձուներուն, և ուրիշ շատ անձանց:

Նախ քրիստոնէական վարդապետութեան վրայ հարցաքննութիւն եղեր է հայերէն լեզու. երկրորդ՝ հայերէն և մօլտովերէն քերականութեան վրայ. երրորդ՝ աշխարհագրութեան վրայ մօլտովերէն լեզուով. չորրորդ՝ հայոց պատմութեան վրայ. հայերէն թուաբանութեամբ ի մօլտովան լեզու. հինգերորդ՝ թուաբանութեան վրայ մօլտովան լեզուով. ու վեցերորդ՝ հայերէն բանաստեղծութեան ու ճարտասանութեան վրայ: Աս հասարակ բոլոր աշակերտները շատ ճշգրտութեամբ ու անխալ պատասխան տրւեցին, իրենց եղած զոնազան հարցմունքին լուս. որով ներկայ գտնուող կաւաւարութեան բարձր գործակալները ու բոլոր հասարակութիւնը խիստ գոհմանցեցին ան աշակերտներուն յառաջագիտութիւնէն ըստ ամենայն մասին: Եւաշէն Հայոց հասարակութեանը կողմանէ կըպարտաւորինք մեր երախտագիտութիւնը յայտնել Սօլտովայու բարեգութ կաւաւարութեանը, որ անդադար խնամք կըտանի մեր ազգին ուսումնական յառաջագիտութեանը. կըյոսանք որ Սօլտովայու Հայոց ժողովուրդն ալ հոգ կըտանի մէկ արժանաւոր ընդարձակ վարժարան մը շինելու. ուր տեղ վարժապետները ու աշակերտները կարող ըլլան հանգստութեամբ իրենց ուսմանցը պարապել:

կըցաւ անոր միտքը ու արտորաւով կրկնեց շուտ մը ու ըսաւ:

—Այո՛ գոն կըսիրես ան տղան. իմ թղթերս անանկ յայտնի կըցըցունեն աս բանը՝ որ դիտես թէ կըխօսին: Բայց աս կիրքը մեծ սրտեղութիւն մը պատճառելով՝ դժբաղդութեան մէջ ձգեր են քեզի, ինչու որ գոն խոհեմ ես, ու քու խոհեմութիւնդ մեծ ցաւ կուտայ քեզի որ պահպանես...: Այո՛, ծեր էրիկ մը ունիս գոն՝ որ ամենեւին չես սիրեր. բայց միշտ հաւատարիմ պիտի մնաս անոր... խեղճ կնիկ:

Երիտասարդ տիկինը յիշաւ մեծ տառապանքի մէջ էր աս խօսքերը լսելով, ինչու որ իս գուշակութիւններուն ամենն ալ ստոյգ էին. բայց եկած չէր որ հարցընէ, ո՛չ իր անցած պատմութիւնները, և ո՛չ իր ներկայ վիճակը, ուստի սրտաշարժ հայեաճքով մը կընայէր պառաւին երեսը, նստած ամուսին վրայ անդադար կերերար, ու կըթուէր թէ բան մը հարցընելու կըպատրաստուր, ու խօսքը լեզուին տակը կըմնայ: Բայց թուղթ բացողը ասանկ շարունակեց իր խօսքը:

—Վանի մը բարեկամուհի ունիք դուք որոնք չեն սիրեր քեզի. ասոր պատճառը յայտնի է, դուք մանկա-

մարդ էք՝ գեղեցիկ ու հարուստ: Այս երիտասարդը ուրուն համա՛ խօսեցայ, երկայն ժամանակ պիտի ապրի, շատ հարուստ ու պատուաւոր պիտի ըլլայ, ու մէկ մեծ պաշտօնի մը հասնելու է... երջանիկ պիտի ըլլայ ու ամուսնանալու է:

—Ամուսնանալու է մի, (կտրեց անոր խօսքը՝ երիտասարդ տիկինը, ալ չի կրնալով ինքզինքը զսպել) էյ ուր՛ չես, ըսէք ինձի կաղաչեմ. ու ես դժբաղդս ինչ պիտի ըլլամ:

—Ա՛հ կեցի՛ր, պուռաց լիւսդին, որ վերջապէս աղէկ հասկըցաւ աս կնոջը յոյսը, ու գուշակեց անոր սրտին բաղձանքը որ իր երկանը մեռնելու կուղէր. կեցի՛ր, ահա թղթերը վերստին կըխօսին քեզի համար... բայց թուղթիւն ըրէ, կրկնեց նորէն, կեղծաւորութեամբ մը քրմծիծաղ ըլլալով, գուցէ քեզի կըվշտացնեմ... կրնամ արդեօք ըսելու:

—Ա՛հ համարձակ բոլորն ալ, պատասխանեց հասկընալ ձայնով մը:

—Պիտի փոխես ատ բաց գունով հագուստը տիկին, պիտի հանես ատ փետրազարդ խոյրը (շափղա), և ատ ճերմակ մետաքսէ ոտնամանները... Աղէկ միտք դիր

ինձի. ահա երկու իրեք թղթի՛ծարաներ՝ որ քեզի համար բան մը չեն ըսեր՝ ասոնք անշուշտ քու պրիւթեան ժամանակը կըցըցունեն, որ միս մինակ ու ատանին տեղ մը պիտի անցընես... բայց անատենը ալ էվելի գեղեցիկ պիտի երևնաս. բարեբաղդութիւնը առողջութիւն կուտայ մարդու: Գոն այս թնպամորթ երիտասարդին հետ ընկերացած ես, որ շատ կըսիրէ քեզի, պիտի կարգըվիս անոր հետ. ստոյգ կըսեմ պիտի կարգըվիս անոր հետ՝ որն որ շատ կըսիրես տիկին:

Երիտասարդ կինը ան ատենը միայն մէկ խօսք մը զրուցեց. բայց այնքան ցած ձայնով՝ որ թէպէտ և չի լսեց պառաւը՝ սակայն խելոյն գուշակեց զայն:

—Եւստով կըսես գոն. կուզես գիտնալ թէ քիչ ատենէն որբեւորի պիտի մնամ մի:

Իստանեց թղթերը՝ կտրեց ու ըսաւ սաստիկ արագութեամբ:

—Եւստ աղէկ թղթեր բացվեցաւ քեզի համար, տիկին. ես դեռ տեսած չէի ասանկ բարեգուշակ թղթեր...: Եւշուշտ շուտով պիտի կասարովի ըսածս, մէկ ամսը վան մէջ կամ տասնհինգ օրվան մէջ. ինչ գիտնամ, աւտա ինձի՛ որ ծերը երկու ամիս չի պիտի ապրի:

ԲԵՐԴԱՐԱՆԻ ԿՐԴՐԵՆ ։

«Նոր ռոճիկներ կրտսմանին կոտանդնու-
այօրի դեպքանատան ու (ամանեան քաղաքները ե-
ղած հիւպատոսարաններուն ։ Վասպանին տարեկան
ռոճիկն է 36,000 բուպի (140,000 Փռանքի չափ) ։
Վիւանատան (բանէլէրիա) հասարակ մարդիկին-
րէն ՚ի զատ , մէկ ուրիշ առեւտրական մասնաւոր դի-
ւանատուն մըն ալ տըրեկցաւ զեւպանին . 120,480
արծաթէ բուպի տարոյ տարի դեպքանին ու հիւ-
պատոսարաններուն ծախք կըլլայ ։ Վսիկէյ ետքը
ընդհանուր հիւպատոսարաններ պիտի հաստատուին
նաեւ Վալարիայի , Վոլտաւիայի , Վերվիայի , Լազիւ-
տոսի մէջ և այլն , ու մէկ հիւպատոսարան ալ Լաշի
մէջ ։

ՕՐԱՆՈՒՆ Ի ՈՒՐԵՐ

Մօտ օրերս Բնդդիայի արևելեան կողմերը սաս-
տիկ փոթորիկներ ըլլալով շատ վնասներ տըլաւ ։
Վրեթէ աս կողմերը գտնուած բոլոր նաւերուն կայ-
մերը խորտակեցան , առաջատաները պատուեցան ,
որոնք վերջապէս ստիպուելով Լաւրմուտի ու Սա-
կօղի նաւահանգիստները մտան ։ Հատ մարդիկ բո-
լորովին ջնջուեցան թէ մարմնով և թէ ստացած-
քով ։ Վէնէյա ու Վիլֆօրտ նաւերը շատ անձինք
կորսնցուցին զէշ օդերուն տունը ։ Վիլտիայի մէջ
կալէսի կողմերն ալ անթիւ դիպուածներ նոյնպէս
պատահեցան , ու Վիլտէս մէկ մեծ նաւ մը , որ ցո-
րին բեռնաւորուած էր Սալիի Վոլի մէջ կորսուե-
ցաւ ։ Բոլոր իր նաւատորները , մէկ հոգիէն ՚ի զատ
խրդաբեցան ։

— Մօնդէվիտէյէն (Վմերիգա) կըզրեն 6 յունիս ։
Լէօփօլտին գաղղիայի նաւը , որու կըհրամայէր
Ֆիօք նաւապետը , Պայօնէն մեկնելով խորտակեցաւ
մայիս ամսու 28 ին ալեկոծութեան հանդիպելով
Վատդիլտի եղբորը ։
270 ճամբորդ կար մէջը , որոնց 200ը խղճուէր է
կըսեն ։
— Մէկ անգղիացի նաւաւար մը , Վորնուալի-
սի նաւատորներէն , չինացի գեղացիներուն ձեռքը
իյնելով , կաշին քերթեր հաներ են , անոր աջ

Միջոցիս մէկ բարակ ձայն մը եկաւ դահիճէն , ու
երկու խորհուրդ հարցնող կնիկներն ալ մեծ վախի մէջ
ընկան ։
— Մի՛ վախճաք ան իմ կատուիս ձայնն է , ըսաւ
ժիւսդին , առանց չիօթելու ։
Բայց , երիտասարդ կինը վախնալով ելաւ ու ձեռքը
քսակը խօթեց . ժիւսդին կրկնեց համարձակ ։
— Հաւատա՛ ինչ որ քեզի ըսի . տիկին , իմ թղթերս
երբէք չեն խաբեր . վաղման արեւը ծագելուն վրայ ինչ-
պէս որ ստոյգ եմ նէ , անանկ ալ կըհաստատուի թղթերուս
գուշակութիւններուն ։
Երիտասարդ կինը ոսկի մը նետեց գորգին (խալին)
վրայ , ուր տեղ մարգարեական թղթերը կըկենային . կա-
շաղակն ալ ողջունեց զանոնք անատենը՝ երերալով իր
վանդակին մէջ ։
— Երթաք բարո՞ւ , բարի յաջողութիւն ։
— Մտիկ ըրէք ինչ կըսէ կաշաղակը՝ ըսաւ ժիւսդին
ինչու որ ամենեւին այսքան խօսք ըսած չունէր ։
Երկու կնիկը երթալուն պէս՝ ժիւսդին վաղեց ներ-
քին դահիճը ։
— Լս գիտէի որ դուն հոս ես , ըսաւ Պ . Մէյնաւսին

ձեռքի դաստակէն (պիլէկ) ինչան մատուցնե-
րուն ծարը ։ Չինացիներուն աս բարբարոսու-
թիւնը տեսնալով անգղիացիք , խկոյն փոքր նաւեր
խրկելով կործանեցին գեղը ուր տեղ աս անգուլթ
գործքը եղաւ ։ Կըյուսացի թէ ողորմելի նաւաւարը
կառողջանայ ։

— Վմերիգայի նաւատոր մը Վիլքէլ Սմիթ ա-
նուն , 23 տարեկան , շրջաբերական դիրերով իմա-
ցուց իր դիտաւորութիւնը , Վիւնտէրլանտի (Վնդ-
դիա) կամուրջէն գետին մէջ ինքզինքը նետելու ։
Կառավարութիւնը բռնեց աս մարդը որ արգիլէ իր
անխոհեմ ու յանդուգն առաջարկութիւնը գործքի
դնելու ։ Բայց ետքը թող տըրեկով՝ կառավարու-
թեանը զգուշութեան հակառակ , նետեց զինքը 110
ոտք բարձրութենէն վար բաղմաթիւ հետաքրքիր
մարդկանց ներկայութեանը , որոնց իմացուցեր էր
ինքը առաջուց ։ Չուրիի տակը ընկղմելէն ետքը
կրկին երեսը ելաւ ու լողալով պըտիկ նաւի մը մէջ
մտաւ , ուսկից բարեկեց ծովագետները եղող ան-
թիւ մարդիքը , որոնք սկսան գովել զանի ծափ զաւ-
նելով ։ Վիւնտէրլանտի երկրթէ երեւելի կամուրջը
անանկ բարձր շինուած է որ մեծ նաւերը 400 թօնօ
բեռ կրող կանցնին անոր տակէն առանց դաշտու
անոր իրենց կայմերը ։ Լաբոր Սմիթ ցամաքը ելաւ ,
բոլոր ժողովուրդը վրան ժողկեցան ։ Հատ մարդիկ
ստակ տալով՝ անոր քաջութիւնը վարձատրեցին .
ետքը կառավարութիւնը նորէն բռնեց զանի ու բան-
տը զրուս պատճառելով թէ մուրացկանութիւն կը-
նէ ։

Տարօրինակ իջեան ։

Երիտայի մէջ , ինչպէս կըզրեն անգղիական օ-
րագիրները , խիստ մեծ իջեան մը պիտի չինի մօտ
առնենք , որ պիտի բացուի 1843 ին ։ Ըս բանիս
համար պատրաստուելու տեղը քսանրկից հին շին-
ւածքներ կային որ հիմայ փրցուցին , տասներկու
մասնաւոր շէնքեր կառուցանելու համար , որոնց ամ-
մենը մէկտեղ պիտի բաղկացնեն աս տարօրինակ
իջեանը ։ Ըս շէնքերուն ամմէն մէկը առանձին
ազգի մը համար է , առաջինը՝ ամերիկացոյց , երկ-
րորդը՝ գերմանացոյց , երրորդը՝ դաղղիացոյց , չոր-

և այս մտածութիւնս պատճառ եղաւ ու չի թողուց որ
գործս աղէկ մը տեսնայի . ինչու որ իմ միտքս ցրուած
էր , չի կրցայ գուշակել շուտով աս կնոջը ամմէն բանէն
էվելի հարկաւոր եղածը Ենիկա մէկ ծեր էրիկ մը
ունի . բայց աղէկ կըթրված ըլլալով՝ չուզէր խաբել
բարի մարդը . այլ միայն կուզէ գիտնալ թէ երբ պիտի
մեռնի ։ Եսիկա մէկ յայտնի բան մըն է Ճշմարիտ
կըսեմ , որ աս ծեր Պարոնին տեղը ըլլայի նէ , աւելի
կուզէի ինք իր գլխուս՝ ըլլալ քան թէ ասանկ կին մը
ունենալ որ իմ օրերս համրէ ու ամիսներս չափէ . . .
բայց ի՞նչ ունիս դուն Պ . Ենադու . ինչու գեղներես .
կարծեմ մտեցար աս ներքին դահիճին մէջ ։

— Չէ՛ , բան մը չունիմ . միայն բարով , ժիւսդին , դուն
հիմակ կըճաննաս Մէյնաւսի կոմսուհին ։
— Ի՞նչ կըսե՞ս , քու կնիկդ էր անիկա ։
— Կոմսը դուրս ելաւ , ու կաշաղակն ալ պուսաց ետե-
ւն ։

— Երթաք բարո՞ւ , բարի յաջողութիւն ։
Մէկ ամիս մը անցնելէն ետքը՝ Մէյնաւսի տանը սե-
նեակները սկսով պատած էր . բայց ընութիւնը , դիպա-
ծը , բժշկական արհեստը կամ գուցէ այս իրեքն ալ մէ-

րորդը՝ հոլանտացոյց , հինգերորդը՝ ռուսաց կէ՛ կէ՛ ։
Ենմէն մէկ աղգ պիտի ունենայ իրեն յատուկ խո-
հանոց , խոհարարներ , բժիշկներ , թանգարան վեր-
ծանութեան , ու իրենց քաղաքէն ալ սպասաւորներ
ծառայութեան համար ։ Մտր շինութեան ծախքը ,
հինգհարիւր հազար իրէ սթէրլինգի պիտի հասնի
60,000,000 փուլուշի չափ . ու աս գումարը պիտի
պատրաստեն մասնաւոր անձինք բաժանորդ ըլլալով
որ իջեանին շինութեանը ձեռք զարնեն . ու անոնց
զլխաւորներն ալ ասոնք են . մէկ ամերիկացի մը
Տէվիսէն անուն , մէկ գերմանացի մը Բերաշամ Սը-
միդ , ու մէկ հոլանտացի Երոն Տուքէս . աս վերջի
երկուքը հրեայ են ։

Վալտ . բանասիրական

() Բագ . Վ Ենեակի ։

Մեծ բրիտանիայի բառւամէնդին տըրւած ճիշդ
տեղեկութիւններուն նայելով , 1841 տարւան մէջ
երկրթէ ճամբայով երթեկութիւն ընող բոլոր
ճամբորդներուն թիւը՝ Բնդդիայի մէջ , 4,600,000
հոգիի կըհասնի ։ Վոյն տարւան մէջ՝ կըսեն անգ-
ղիական օրագիրները , այսքան բաղմաթիւ ճամ-
բորդներէն՝ մինակ երսուներ վեց անձինք վնասեցան
որոնց 22 մեռան ։

Պէլճիգայի մէջ՝ 1841 ին , աս տէրութեան եր-
կրթէ ճամբաներէն 2,640,000 անձինք ճամբորդու-
թիւն ըրեր են . մինակ մէկ մարդ մը դիպածով մե-
ռեր է , և ուրիշ ութ հոգի ալ քիչ մը վիրաւորեր են ։
Վսիկէյ յայտնի կըլլայ որ երկրթէ ճամբաները
շատ ապահով են , թէ որ բաղդատելու ըլլանք
կառքերով , և ուրիշ կերպով ճամբորդութիւն ընող
անձանց վնասներուն հետ , որոնք ալ էվելի կըլլան
միշտ ։

Վաղղիական լրագիր մը կըհաստատէ , թէ
Վաղղիայի մէջ 1,329 հիւանդանոց և հիւրանոց կան
որոնք 152,830 աղքատ հիւանդներ կընային ։ 6,275
ողորմութեան գրատուններ կան կըսէ , որոնք մաս-
նաւոր ընկերութիւններէ հաստատուած են , 695,912
չքաւորներու օգնելու համար ։ Մարապետներու ըն-
կերութիւնները՝ 1,200,000 հիւանդներու օգնութիւն

կէն փութը հանեցին ժիւսդին անսխալ գուշակութիւն-
ները . ինչու որ հիւանդանոց Մէյնաւսի կնիկը քանի
մը օրվան մէջ մեռաւ ու իր երկանը առողջութիւնը շատ
աղէկ վիճակի մէջ էր . նաեւ անանկ կըկարծուի , ամիս մը
առաջ եղած գուշակութեանը նայելով , թէ երիտա-
սարդ տիկնոջը սիրահարեալ տղան , ալ էվելի տրտմեցաւ
ու սուգ բռնեց անոր մահուանը համար քան թէ ծեր
էրիկը ։

Պ . Մէյնաւս բաւական ամսական մը կապեց աս պա-
ռաւ կնոջը՝ որ ատենօք իր մօրը կըծառայէր . և թէպէտ
թղթերը բնաւ սուտ չեն ըսեր , (ինչպէս կըհաստատուի տը-
կարամիտ կնիկները , որ կուրօրէն դրամ կուտան թուղթ
բացող կամ բախալ քաշող պառաւներուն) այսու ամե-
նայնիս ժիւսդին բոլորովին հրաժարեցաւ աս արհեստէն ։

(Ժարդ մանեաց ՚ի գաղղիականէ

Պաւլէն Հ) . Խաղաղարար

Պօլեցի

Երկրորդական վարժարանին ։

Դ ՏՊԵՐԸՆԻ ՍՏԵՓԸՆՆՈՍԻ ՊԸՊՈՆԸ Ն